

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
սեպտեմբերի 30-ի N 1632 - Ն որոշման

«Հավելված N 15
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿ ԳՐԱՎՈՐ ԳՈՐԾԱՐՔԻ ԿԱՏԱՐՄԱՄԲ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են առանց Ճանապարհային ոստիկանության իրավասու ստորաբաժանում ներկայանալու Ճանապարհային ոստիկանության էլեկտրոնային՝ www.roadpolice.am հարթակում (այսուհետ՝ հարթակ) հասարակ գրավոր գործարքի (այսուհետ՝ գործարք) կատարմամբ միաժամանակ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում և պետական հաշվառում (այսուհետ՝ գրանցում և հաշվառում) կատարելու հետ կապված հարաբերությունները:

2. Հարթակում գործարքի կատարումը և դրանից ծագող տրանսպորտային միջոցի գրանցումը և հաշվառումը հասանելի է միայն ֆիզիկական անձանց պատկաճ նող՝ Հայաստանի Հանրապետությունում այդ գործողության պահի դրությամբ հաշվառված տրանսպորտային միջոցների համար:

2. ՀԱՐԹԱԿՈՒՄ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

3. Միաժամանակ տրանսպորտային միջոցի գրանցում և հաշվառում կատարելու գործողության՝ տրանսպորտային միջոցի պետական գրանցման գործողության վրա տարածվում են սույն որոշման N 14 հավելվածի՝ հարթակում տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար սահմանված կարգավորումները՝ սույն կարգով սահմանված առանձնահատկությունների հաշվառմամբ:

4. Սույն որոշման N 14 հավելվածի 11-րդ կետով սահմանված կարգով ձեռք բերողի էջում (այսուհետ՝ էջ) տրանսպորտային միջոցի պետական գրանցման գործողության նախագիծը պատրաստ լինելու մասին հաղորդագրությունն ստանալուց հետո ձեռք բերողը «Միաժամանակ հաշվառում» դաշտն ակտիվացնելու միջոցով կարող է անցում կատարել ձեռք բերվող տրանսպորտային միջոցի հաշվառման գործողությանը ևս կամ ղեկավարվել սույն որոշման N 14 հավելվածի 12-րդ կետի կարգավորումներով:

5. Ակտիվացնելով «Միաժամանակ հաշվառում» դաշտը՝ համակարգն ինքնաշխատ եղանակով պատրաստում է նաև ձեռք բերվող տրանսպորտային միջոցի պետական հաշվառման նախագիծը:

6. Միաժամանակ տրանսպորտային միջոցի գրանցման և հաշվառման գործողության նախագծի պատրաստ լինելու մասին հաղորդագրություն է ուղարկվում ձեռք բերողի էջին:

7. Ձեռք բերողը հաղորդագրությունն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում հարթակի միջոցով՝

1) կատարում է օրենքով սահմանված տուրքերի և վճարների վճարում (բացառությամբ ավտոմոբիլի հաշվառման համարանիշ հատկացնելու համար վճարման ենթակա պետական տուրքի և (կամ) ցանկալի համարանիշ ստանալու համար վճարման ենթակա օրենսդրությամբ հաստատագրված լրացուցիչ գումարի վճարումը հավաստող փաստաթղթերի, եթե ներկայացվում է հերթական

կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ չփոխարինելու մասին հայտարարություն).

2) ներկայացնում է տրանսպորտային միջոցի համարակիր ազրեգատների և թափքի (խցիկի) գույնի փոփոխություն կատարված չլինելու մասին սեփականատիրոջ հայտարարությունը.

3) ներկայացնում է ապացույց ձեռք բերվող տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը և հաշվառման համարանիշերը (բացառությամբ այն դեպքերի, երբ դրա փոխարեն հարթակի միջոցով ներկայացվում է հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ չփոխարինելու մասին հայտարարություն) պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ Ճանապարհային ոստիկանություն առաքելու մասին:

8. Հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ չփոխարինելու մասին հայտարարություն ներկայացնելու դեպքում հաշվառման նոր համարանիշեր չեն հատկացվում:

9. Տրանսպորտային միջոցի գույքահարկի պարտավորությունների կատարման համար սահմանված վճարումը կատարվում է գույքահարկի միասնական համակարգում կամ այդ համակարգի հետ վճարումների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումն ապահովող ցանկացած այլ եղանակով:

10. Սույն կարգով նախատեսված՝ կողմերի համաձայնությամբ ձեռք բերվող տրանսպորտային միջոցի հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ չփոխարինելու հետ կապված կարգավորումները չեն գործում և հաշվառման գործողությունը ենթակա է մերժման (բացառությամբ, երբ ձեռք բերողը համաձայնություն է տալիս այն փոխանակելու մասին), եթե ձեռք բերվող տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշերը չեն համապատասխանում (հին նմուշի են) այդ պահի դրությամբ գործող սույն որոշման N 11 հավելվածով սահմանված հաշվառման համարանիշերի ձևերին:

11. Տրանսպորտային միջոցը համարվում է հաշվառված, եթե հարթակում տեղեկատվություն է ստացվում սույն կարգի 7-րդ և 9-րդ կետերով սահմանված գործողությունների կատարված լինելու մասին և բացակայում են ինչպես սույն

կարգով, այնպես էլ սույն որոշման N 2 հավելվածի 10-րդ կետով նախատեսված տրանսպորտային միջոցի գրանցումը և հաշվառումը մերժելու հիմքերը:

12. Ձեռք բերված տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը, իսկ հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ չփոխարինելու մասին հայտարարություն ներկայացված չլինելու դեպքում նաև հաշվառման համարանիշերը, պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ առաքվում են ձեռք բերողին սույն կարգի 7-րդ և 9-րդ կետերով սահմանված գործողությունները կատարված լինելու մասին հավաստումներն ստացվելուց հետո 5-օրյա ժամկետում, եթե հաշվառման վկայագիրը, իսկ հերթական կամ ցանկալի հաշվառման համարանիշերը գործարքի կողմերի համաձայնությամբ չփոխարինելու մասին հայտարարություն ներկայացված չլինելու դեպքում նաև հաշվառման համարանիշերը, էլեկտրոնային թվային ստորագրության դիմաց առձեռն չեն ստացվել ձեռք բերողի կողմից (կամ նրա ներկայացուցչի): Առաքանին վերադարձվելու դեպքում, դրա մասին հաղորդագրություն է ուղարկվում ձեռք բերողի էջին՝ նշելով, որ փաստաթղթերը ձեռք բերողի (կամ նրա ներկայացուցչի) էլեկտրոնային թվային ստորագրության դիմաց հնարավոր է ստանալ Ճանապարհային ոստիկանության վարչական մասից:

13. Տրանսպորտային միջոցի պետական հաշվառման գործողության կատարումը մերժելու մասին ձեռք բերողի էջին անմիջապես ուղարկվում է հաղորդագրություն:

14. Տրանսպորտային միջոցի պետական հաշվառման գործողության կատարումը մերժելու մասին որոշումը կայացնելուց հետո այն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ժամկետներում հանձնվում է վարչական ակտի հասցեատիրոջը:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ